## Արձանագրություն N3

**Սևանի ԲԿ ՓԲԸ-ի բժշկական պարագաների ՍԲԿ-ԷԱՃԱՊՁԲ18/15 ծածկագրով ընթացակարգի գնահատման հանձնաժողովի առաջին նիստի**

**կայացման նիստի**

ք. Սևան

09 նոյեմբեր 2018թ.
Ժամը՝ 16[30]

*Մասնակցում էին՝*

Հանձնաժողովի նախագահ՝ Հրայր Խալաֆյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Միրանուշ Գևորգյան

Սարգիս Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վարդուհի Սարգսյան

**1.Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին
2.Նիստի կասեցման մասին
3. Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին
4 Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին։

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝0**

1.Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին.

Ընդունել ի գիտություն, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները , Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: ՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ18/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել սույն ընթացակարգի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերի II մասի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները) , որոնք համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Մակայն Լինարե ՄՊԸ-ի և Ֆարմեգուս ՄՊԸ –ի կողմից հրավերով սահմանված հավելվածները կցագրված չեն:

Ընտրված մասնակիցներին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հայտեր ներկայացրած և բավարար գնահատված , նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը :

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0*

<u>2.Նիստի կասեցման մասին</u>

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի մասին 47-րդ կետի համաձայն կասեցնել նիստը ՝ առաջարկելով Լինարե ՄՊԸ-ին և Ֆարմեգուս ՄՊԸ-ին կցել հրավերով սահմանված հավելվածները :

<u>3.Չկայացած չափաբաժինները հաստատելու մասին</u>

«Գնումների մասին » ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն 3,7,10,11,12,14,19,20,21 չափաբաժինը հայտարարել չկայացած ,քանի որ ոչ մի հայտ չի ներկայացվել: ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն 8,13,15 չափաբաժինները հայտարարել չկայացած , քանի որ առաջարկված գները գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցները, իսկ 1,17 չափաբաժինը հայտարարել չկայացած , քանի որ առաջարկված մինիմալ գները կրկնվում են:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0*

<u>4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>

ՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ18/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել նոյեմբերի 13-ին, ժամը 16:30-ին Մեանի ԲԿ ՓԲԸ-ի գնումների բաժնում՝ ք. Սևան Նաիրյան 169 1-ին հարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝0:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հրաչյա Խալաֆյան |
| Հանձնաժողովի զնահատող անդամներ՝ | Սիրանուշ Գևորգյան |
| | Սարգիս Պողոսյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Վարդուհի Սարգսյան |